


Երևանի Կոմիտասի անվան
Պետական Կոնսերվատորիա
Yerevan Komitas
State Conservatory
Ереванская Государственная
Консерватория им.Комитаса

ԵՐԱԺԻՇ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (198)

6 հունիս 2022

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ. «Ալեքսանդր Սպենդիարյան. Հայնասկավառակով պատկերագիր»



«Երևան, իմ սեր» հիմնադրամի շենքում «Ալեքսանդր Սպենդիարյան. ձայնասկավառակով պատկերագրի» շնորհանդեսը

7

Հանրաձայնաչ «Կուս» փառյակը կրկին Երեւանում էր



Հունիսի 17-19 Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի իրավերով Երևան էր ժամանել Բեռլինից անվանի «Կուս» լարային քառյակը:
«Կուս» քառյակը հիմնադրվել է 1991-ին: Ներկա կազմով (Յանա Կուս՝ ջութակ, Օլիվեր Ուիլլե՝ ջութակ, Ուիլիամ Քոլման՝ ալտ, Միքայել Հախնազարյան՝ թավջութակ) հանդես է գալիս 2008-ից: Այն հայտնի դարձավ 2002 թվականին Գերմանիայի երաժշտական խորհրդի (Deutscher Musikrat) և Ռեչիո Եմիլիայի լարային քառյակների "Premio Paolo Borciani" միջազգային մրցույթում տարած հաղթանակներից հետո:

6

ԱՐԱՄ ԽԱՋԱՏՐՅԱՆԻ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱԼԲՈՍԸ»



Արամ Խաչատրյանը որդու հետ

3

ԵՊԿ համերգային հայտագրերի վերականգնումը



Ծովինար Մովսիսյան, Գայանե Էլիազյան, Սոնա Հովհաննիսյան, Նարինե Ավետիսյան



ԵՊԿ ներկայացուցիչները Մ. Սաշտոցի անվ. Մատենադարանի հնագույն ձեռագրերի վերականգնման բաժնի աշխատակիցների հետ



2

«Ալգային սվազարանների համույթներ» ուսումնական շեռնարկի շնորհանդեսը «Նարեկայի» արվեստի միությունում



«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլ, դիրիժոր՝ Հելբերտ Ասատրյան


6

Հունիսի 1-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում Բաց դռների օր էր: Այցելուները՝ ԵՊԿ ուսանողական խորհրդի անդամների ուղեկցությամբ, հնարավորություն ստացան ծանոթանալու կոնսերվատորիայի պատմությանը, ներկա գտնվեցին իրենց կողմից նախընտրած տարբեր դասերի դասախոսներին:

Այցի շրջանակներում այցելեցին Կոնստանտին Սարաջևի անվան գրադարան, ԵՊԿ խմբագրություն, Ղազարոս Սարյանի անվան Օպերային ստուդիա, Ակուստիկ լաբորատորիա, Ֆուլկլորագիտության ամբիոն, Չայնադարան, Համերգային դահլիճ, ինչպես նաև ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:



Երևանի պետական կոնսերվատորիայի Բաց դռների օրվա այցելուները գրադարանում և ծայնադարանում



Վերականգնվել են Հայաստանի համերգային-մշակութային կյանքն արտացոլող գրեթե հարյուր տարվա վաղեմություն ունեցող Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համերգային հայտագրերը:

Տասնամյակների ընթացքում մշակված և պատշաճ խնամքից զուրկ հայտագրերը դատապարտված էին ոչնչացման: Սակայն դրանք նոր կյանք ստացան Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն ծնագրերի վերականգնման բաժնի վարիչ տիկին Գայանե Էլիազյանի և բաժնի հմուտ աշխատակիցների ջանքերով: Հայտագրերի վերականգնումը հնարավոր եղավ իրականացնել Կոնսերվատորիայի նախկին շրջանավարտներ, ներկայումս Բոստոնում (ԱՄՆ) բնակվող Նուրե Հակոբյանի և Սարգիս Կարապետյանի հովանավորությամբ:

Վերականգնված 12 վավերագրերն իրենց արժանի տեղը գտան Կոնսերվատորիայի գրադարանի Հատուկ բաժնում նախատեսված առանձին պահոցում:



Գայանե Գեղամյան, Դմիտրի Վրոպին, Մակվալա Կարաշվիլի

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում անց էին կացվել Մեծ թատրոնի Երիտասարդական օպերային ծրագրի 2022-2023 թատերաշրջանի մենեթրիչների թափուր տեղի համար մրցույթ: Ընդունող հանձնաժողովի անդամներն էին՝ Մեծ թատրոնի երաժշտական տնօրենի օգնական, օպերային մենեթրիչի Մակվալա Կարաշվիլին և Երիտասարդական օպերային ծրագրի ղեկավար Դմիտրի Վրոպինը: Երևանյան լուսնների 12 մասնակիցների ընտրվեց ԵՊԿ ակադեմիական երգեցողության բաժնի ուսանող Սառա Հակոբյանը (դասախոս՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյան): Մրցույթի հաջորդ փուլերը տեղի կունենան առաջիկայում Մոսկվայում:



Սառա Հակոբյան

Հունիսի 11-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ «Հայ-գերմանական դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակը. մշակույթը որպես համագործակցության զարգացման ազդակ» խորագրով համաժողով, որին ակտիվ մասնակցություն ունեցան նաև ԵՊԿ ներկայացուցիչները: Միջոցառումը համատեղ կազմակերպել էին Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը և «Արամ Խաչատրյան մրցույթ» մշակութային հիմնադրամը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ-ում Գերմանիայի դեսպան Վիկտոր Ռիխտերը, ով իր խոսքում ընդգծեց մշակույթի կարևոր դերը Գերմանիայի և Հայաստանի հարաբե-

րությունների հետագա զարգացման մեջ, ինչպես նաև Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար Հետեֆան Սալբերիուսը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարի տեղակալ Յան Պելչինգերը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավար, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը և «Արամ Խաչատրյան մրցույթ»-ի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը:

Միջոցառման շրջանակներում բանախոսները ներկայացրեցին մշակույթի ոլորտում Հայաստանի Հանրապե-

տության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև համագործակցության պատմությունն ու զարգացման նոր հնարավորությունները: Բանախոսներն էին քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, Գերմանիայի Ֆրիդրիխ Հիլլերի անվան Յենայի համալսարանի քաղաքագիտության ինստիտուտի իրավիրված գիտնական Աշոտ Ալեքսանյանը, երաժշտագետ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, Պրոֆ. Դր. Աննա Ասատրյանը և երաժշտագետներ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատողներ՝ Դր. Տաթևիկ Շախկուլյանն ու Դր. Գայանե Ամիրաթյանը:

Հունիսի 20-ին, ԵՊԿ Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիայում տեղի էր ունեցել Մոցարտի «Դոն ժուան» օպերայից ընտրված հատվածների համերգային կատարումը՝ ԵՊԿ Սարաջևի անվան ուսանողական նվագախմբի և մենակատարների մասնակցությամբ: Այն մեծ հաջողությամբ անցավ՝ դահլիճը լեփ-լեցուն էր:

Օպերայից ընտրվել էր 21 հատված: Կատարմանը մասնակցեցին ԵՊԿ 65 ուսանող: ԵՊԿ Սարաջևի անվան ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Նատալի Գալստյան: ԵՊԿ Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար՝ Հասմիկ Պալայան:

Ստորև ներկայացնենք մենակատարների մեջբերումները իրենց դերերի մասին:

«Ինձ շատ հոգեհարազատ է Մոցարտի Դոն ժուանը: Նա անվախ է, խիզախ ու հմայիչ: Ազնվացեղ է ու կյանքով լի: Նա կնամեծար է ու սիրում է բոլոր կանանց, սակայն փնտրում է իր իդեալին: Ես այդպիսի Դոն ժուան եմ»:

Գառնիկ Յուլյան, Դոն ժուան

«Նուրբ, զուսպ և միաժամանակ էմոցիոնալ, հարուստ կերպար է Դոննա Աննան: Գրեթե շատ մոտ ու մեծ է ինձ: Կատարվածի հանդեպ նրա ներքին խռովքն ինքնուրույն մեջ է, այլ՝ երաժշտության, որտեղ երևում է ամբողջ հուզական աշխարհն ու ապրումները: Դոննա Աննան ազնիվ է ինքը իր հետ, փակ կերպար է, խճճված իր զգացումների մեջ: Ինձ համար վիճարկելի է, թե ինչն է նրան դրոշմ վրեժի»:



ԵՊԿ Սարաջևի անվան ուսանողական սիմֆոնիկ նվագախումբ և մենակատարներ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Նատալի Գալստյան

Գալինա Յուլյան, Դոննա Աննա

«Իմ երգած ամենադժվար կերպարներից է: Նա սովորեցրեց ծայրով և օպերայի տարբեր տեսարաններում դերասանական խաղով հաղորդել էմոցիոնալ փոփոխությունները: Դերերը շատ բարդ է և, աշխատելով ամեն մի հատվածի վրա, կարծես անցնում եմ մի ամբողջ վոկալ դպրոցով»:

Մարիամ Հովհաննիսյան, Դոննա Էլվիրա

«Այս վախկոտ ծառան ամբողջ բեմական կյանքով պարտական է իր տիրոջը՝ Դոն ժուանին, ում էությունն առաջին անգամ արթնանում է Լեպորելլոյի կերպարում: Այն ամենն, ինչ տիրոջ համար էական ու իրական է, ծառայի համար՝ երևակայական ու անիրական է: Նա պակաս անամոթ, ճարպիկ ու խորամանկը չի, քան իր տերն է և միշտ ձգտում է ազատվել անհանգիստ ու վտանգավոր ծառայությունից» Միքայել Սարգսյան՝ Լեպորելլո

«Դերերում դժվարը ռեժիսատիվներն էին, դրանք մտապահելը: Կարևորը՝ երաժշտական գիծը չծանրացնելն էր, պետք էր ուղղակի ավելի թեթև երգել: Ցերլինան սկզբից բարի է, հավատարիմ, սիրալիր, ապա՝ հրապուրվող և անհավատարիմ, քիչ անց՝ խիզախ, կտրուկ ու անգամ՝ վրեժխնդիր»:

Անի Գևորգյան, Ցերլինա

«Դոն ժուանը բացառիկ կերպարներից է և ամեն անգամ յուրովի ես բացահայտում: Այս դերերում ամենադժվարը՝ ռեժիսատիվներն էին, իսկ ամենահետաքրքիրը՝ նվագախմբի հետ աշխատելը, որն ինձ մոտ առաջին անգամ էր»:

Թովմաս Թովմասյան, Դոն ժուան

Լուսանկարները՝ Արթուր Խաչատրյանի

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՄԱՆՆԵՐ»

Նրանք բոլորն էլ յուրովի բացահայտում են մանկական քնքուշ ու խոցելի հոգու նրբերանգները: Մանրանվագներից յուրաքանչյուրում կարելի է զգալ զգացմունքների ու տրամադրությունների բազմազան երանգներ, որոնք մեծ նշանակություն ունեն մանկական երաժշտական գրականության մեջ: Շարունակելով Ռ. Շունանի ավանդույթները՝ հեղինակները երեխաներին զվարճալի կերպով ծանոթացնում են ժամանակակից երաժշտական լեզվին, ժողովածուներում ընդգրկում են ուսուցողական ստեղծագործություններ՝ պոլիֆոնիկ պիեսներ, էտյուդներ և այլն, բայց նույնիսկ այդ համարներն ստանում են վերնագրեր և ենթավերնագրեր՝ ըստ ժանրը սահմանող ծրագրերի:

Այս հոդվածում անդրադառնանք Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմ»-ը շարքին:

Ա. Խաչատրյանը խորհրդային դարաշրջանի նշանավոր կոմպոզիտոր է, նրա ներդրումը համաշխարհային մշակույթի գանձարանում անգնահատելի է: Ստեղծելով տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ Ա. Խաչատրյանը թողել է հարուստ ժառանգություն: Եվ նրա ստեղծագործություններից մեկը, որն արժանի է հատուկ ուշադրության՝ «Մանկական ալբոմ» ժողովածուն է, որի մանրանվագները լինելով երեխաների համար գրված վառ ու ինքնատիպ երաժշտական եզակի նմուշներ անցել են ժամանակի փորձությունը:

Այսօր հավանաբար անհնար է գտնել դաշնակահարի, որ իր ուսումնառության սկզբնական շրջանում չի կատարել սույն ժողովածուից որևէ մի պիես:

Խաչատրյանի «Մանկական ալբոմը» կազմված է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է 10 պիես: Առաջին մասն ստեղծվել է հետպատերազմյան տարիներին և լույս տեսել 1947-ին, երկրորդը՝ 1965-ին:

Այս ժողովածուի ուսուցողական պիեսների մեծ մասը կրում է ակտիվ, աշխույժ բնույթ: Նրանցից շատերն ունեն եռամաս կառուցվածք, որոնք իրենց մեջ ներառում է հակադրություններ ու կրկնություններ: Այս ամենը նպաստում է, որ սկսնակ կատարողները հեշտությամբ յուրացնեն նյութը:

«Մանկական ալբոմ»-ի կերպարային բնութագրումը բազմազան է՝ մանկական խաղեր և գործունեություն («Ցատկապարան», «Բարսիկը ճոճանակի վրա», «Դափ»), հեքիաթային պատկերներ («Երեկոյան հեքիաթ»), մանկական երեկույթներ («Ծննդյան օր») և զվարճալի ժանրի տեսարաններ («Երկու զվարճալի մորաքույրեր վիճեցին»):

«Մանկական ալբոմի» երաժշտությունը ցույց տվեց կոմպոզիտորի ոճի առանձնահատկությունները. մանրանվագներն առանձնանում են տեմբրային փայլով և հարուստ ներդաշնակությամբ, արտասովոր գեղեցկության մեղեդայնությամբ, ռիթմով և հնչեղությամբ:

Եթե Ռ. Շունանն ստեղծագործել է իր երեխաների համար, իսկ Պ. Չայկովսկին՝ քրոջ երեխայի համար, ապա Ա. Խաչատրյանը խոսել է իր երեխաների ու սիրելի զարմուհիների մասին՝ նրանցից յուրաքանչյուրին նվիրելով մեկ կամ մի քանի պիես:

«Պատկերացրե՛ք՝ Դյարանը (այդպես էր անվանում Արամ Խաչատրյանին Նատալյա Կիսլովան. - **խմբ.**) վազեց ամբողջ տնով մեկ, Լյադոն հետևեց նրան, գոռալով և ճչալով՝ բոլոր երեխաները շտապեցին հետևել նրանց՝ ուրախությունից ցնցված, որ իրենց սիրելի հորեղբայրն այդքան ուրախ է, աղմկոտ, անսպառ գյուտերի և կատակների հեղինակ», - պատմում էր Նատալյա Կիսլովան՝ Ա. Խաչատրյանի զարմուհին:

Լյադոն թագավորական պուդել է, որը Արամ Իլյիչին նվիրել էր ընտանիքի ընկերը՝ պրոֆեսոր Օպարինը: Արամ Իլյիչը պուդելին անվանել է երկու նոտայով՝ Լյա - Դո:

Կոմպոզիտորն իր ալբոմում խոսում է նաև ընտանի կենդանիների մասին՝ «Բարսիկը ճոճանակի վրա» և «Լյադոն ծանր հիվանդացավ»:

Պետք է նշել, որ «Մանկական ալբոմ»-ի ստեղծման գործում կարևոր դեր են խաղացել Ա. Խաչատրյանի կապվածությունն ու նվիրվածությունը երեխաներին և մանկապարտեզի երաժշտական ղեկավարի ու հայկական դպրոցում երաժշտության ուսուցչի պաշտոնը (նա Մոսկվայի Գնեսինի անվան երաժշտական ուսումնարանի սան էր): Կոմպոզիտորը հաճույքով վերհիշեց այդ դասերը. նախադպրոցականները ոգևորված ողջունեցին իրենց երաժշտական ղեկավարին.

- Արամ քեռին եկել է:

Եթե համեմատենք «Մանկական ալբոմ»-ի երկու տեսարանը, ապա անմիջապես կնկատենք, որ կոմպոզիտորն առաջին նոտատեսարանում բացահայտում է երեխայի ներաշխարհը և խոսում երեխայի նուրբ հոգու մասին՝ իր բազմակողմանի արձագանքով և հուզական դրսևորմամբ: Այս մանրանվագներում մենք կլսենք ոչ միայն ակնթարթային հուզական հոգեվիճակի, այլև անհատականության, նրա ուժեղ և թույլ կողմերի, հորբիներն և այլնի մասին: Երկրորդ նոտատեսարանում Արամ Իլյիչը բացահայտում է երեխայի արտաքին աշխարհը: Այս մանրանվագներում կտեսնենք, թե ինչպես է անցնում երեխաների օրը, և ինչով են նրանք սիրում զբաղվել ազատ ժամերին:

ՆՈՒՆԵ Ալբոմի համարների մեծ մասը բազմաձայն է, սակայն

յուրահատուկ խումբ են կազմում հատուկ պոլիֆոնիկ պիեսներ՝ ինվենցիա և երկու ֆուգա, որոնք եզրափակում են «Ալբոմը»: Պոլիֆոնիա հունարեն նշանակում է բազմաձայնություն, իսկ բազմաձայնության եռությունն արտահայտվում է նրանով, որ ձայներն այստեղ անկախ են, ինքնուրույն:

Ֆուգան (fuga – իտ.՝ վազք) պոլիֆոնիկ ստեղծագործության ամենազարգացած ձևն է, որը հիմնված է էքսպոզիցիայում թեմայի՝ տոնիկա-դոմինանտային իմիտացիայի և դրա պոլիֆոնիկ զարգացման վրա: Այն առաջանալով XVI դարում, դասական ձևի ավարտում տեսք է ստացել Ի. Ս. Բախի ստեղծագործություններում:

Առաջին ալբոմի ֆուգան կոմպոզիտորը նվիրել է իր աղջկան՝ Նունեին, որն այդ ժամանակ սովորում էր Մոսկվայի կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարանի առաջին կուրսում և առաջադիմում էր: Ինչպես վերևում ասվել է, Ա. Խաչատրյանն մանրանվագներում պատմել և ներկայացրել է իր հերոսների կերպարները, ուստի ֆուգան լրջորեն բացահայտում էր դաշնակահար դասեր ներուժը, երաժշտության ընկալման ու վերարտադրման կարողությունները և հմտությունները:

Երկրորդ ֆուգան հնչում է Դո մաժորում, թեման ամբողջությամբ հիմնված է դիատոնիկ հնչյունների վրա, իսկ հակաշարժումը՝ հազեցած է խորմատիկ հնչյուններով: Պատահական չէ, որ ընտրվել է նման ինտոնացիոն ոլորտ, որը կօգնի սկսնակ դաշնակահարին արագ տիրապետել ֆուգայի կառուցվածքին:

Վերջնենք բոլորին հայտնի երգը և այն վերածենք ֆուգայի...

Իսկ հիմա լսենք ժողովածուի ֆուգաները և փորձենք որոշել, թե դրանցից որն է երկրորդը, որը՝ եռաձայն, ֆուգաներից որն է հնչում մաժոր լադում, որը՝ մինոր: <https://youtu.be/nYRjPQzRnik>

Ավելացնենք, որ ժողովածուն եզրափակող եռաձայն ֆուգան գրված է դորիական լադում: Թեման այստեղ ներկայացված է ոչ միայն ուղիղ, այլև շրջված և մեծացված ձևերով:

Արամ Իլյիչը ևս երկու պիես է նվիրել դասերը՝ Նունեին՝ «Անդամտիմոն»-ն և «Ժողովրդականի նմանակում»-ը:

«Անդամտիմոն» բացում է «Մանկական ալբոմ»-ը: Իտալերենից թարգմանաբար «անդամտիմոն» նշանակում է «շարժում տեմպ»: Այս դեպքում կոմպոզիտորն «անդամտիմոն» է անվանել պիեսը, որի հիմքում գեղեցիկ մեղեդի է: Մեղեդին ամեն անգամ տարբեր կերպ է հնչում: Սկզբում այն արտահայտվում է միամիտ աղջկա արտացոլանքով: Միջին մասում ակնառու սինկոպաների շնորհիվ ստեղծվում է հեզաճկուն աղջկա կերպար: Մանրանվագն ավարտվում է մեղեդու ցածր ռեգիստրում՝ տալով նրան դեկլամատիկ բնույթ: Այս քիչ ինչպես է կոմպոզիտորը պատմում իր դասեր մեծանալու մասին. միամիտ փոքր աղջնակից նա վերածվում է նրբագեղ աղջկա, որն ունի իր տեսակետը:

Ինչպես նկատեցինք, մեղեդին մնում է անփոփոխ և ամեն անգամ հնչում է նորովի՝ նվազակցման մի շարք ռիթմիկ, հարմոնիկ և ռեգիստրային փոփոխությունների շնորհիվ:

«Նմանակում ժողովրդականին» մանրանվագում կոմպոզիտորն օգտագործել է «Երանգի» պարի մեղեդին, իսկ ի՞նչ կապ ունեն «Երանգի» պարը և Նունեի կերպարը՝ կհարցնենք:

Հայկական ժողովրդական պարը ի սկզբանե եղել է նրբագեղ (խոսքը կանացի մենապարի մասին է): Եվ ժամանակի ընթացքում հայկական ժողովրդական պարի մեղեդին օգտագործվել է մշակվել է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում, այնուհետև պարի երաժշտության ոճը ենթարկվել է փոփոխության՝ դառնալով համարձակ և ոգեշունչ:

Իրականացնելով հիմնական թեման՝ կոմպոզիտորը կրկին զարդարում է այն զանազան միջոցներով՝ պոլիռիթմի, խաչատրյանական սիրելի սեկունդային հնչողություններ, նոր շտրիխներ: Պատասխան պարը հնչում է ժողովրդական գործիքների «նվագակցությամբ»՝ դիոլ, զուռնա, դուդուկ: ՎԱՐԵՆ (ՌԵՆԻԿ)

Արամ Իլյիչը շատ էր վրդովվում ու անհանգստանում, երբ փոքրիկ Ռենիկն ինչ-ինչ պատճառներով տխուր էր կամ լաց էր լինում: «Իմ աչքերի լույսը»՝ այսպես է անվանել կոմպոզիտորն իր թանկագին, պաշտելի որդուն: Կոմպոզիտորը նրան երկու ստեղծագործություն է նվիրել:

Հաջորդ մանրանվագը կոչվում է «Այսօր արգելվում է զբոսնել»: Պատկերացրե՛ք՝ ուզում եք զբոսնել, բայց դրսում հորդառատ անձրև է, ցուրտ, և ձեզ արգելված է դուրս գալ, քանի որ կարող եք հիվանդանալ: Այս համարում բացահայտվում է նյարդայնացած երեխայի հոգեվիճակը: Նրա տրամադրության փոփոխություններն ընդգծվում են արտիկուլյացիոն նշաններով՝ աղերսական հնչերանգից անցում համառության:

Իսկ հիմա պատկերացրե՛ք հրաշալի, սպիտակ գանգուրներով Լյա-Դո անունով պուդելը ցեղատեսակի շնիկին: Արամ Իլյիչի ընտանիքում բոլորը սիրում էին Լյա-Դոյին, լողացնում, սանրում, թփափացնում էին ակաճեցներին և տանում զբոսանքի: Եվ երբ Լյա-Դոն ժամանակ առ ժամանակ հիվանդանում էր, բոլորը տխրում էին: Արամ Իլյիչը զգույշ և

հոգատար բուժում էր պուդելին, իր օրինակով ցույց էր տալիս մարդկային վերաբերմունք թույլերի, հիվանդների նկատմամբ: Հաջորդ մանրանվագն այդպես էլ կոչվում է «Լյա-Դոն լուրջ հիվանդ է»: Այս տխուր համարը պատմում է փոքրիկ Ռենիկի հուզմունքի մասին, որն առաջացել է իր շատ հավատարիմ ընկերոջ՝ շնիկի հիվանդության պատճառով:

Պիեսը շարադրված է ակկորդային հյուսվածքով, մեղեդին հնչում է ձախ ձեռքում: Այնքան մանկական արցունքներ կան տխուր ակկորդներում, իսկ ուշացած ոտնակի առատությունը միայն ուժեղացնում է հառաչանքները, արցունքներն ու անկանոն շնչառությունը:

Պյոտր Իլյիչ Չայկովսկու «Մանկական ալբոմ»-ում նույնպես կա հիվանդության մասին պիես: Միայն թե այնտեղ տիկնիկն է հիվանդ, իսկ ուշացած ոտնակով տրոհված ակկորդի կառուցվածքը նույնպես հառաչանքներ, արցունքներ, բուռն անկանոն շնչառություն է փոխանցում:

ՎԱՂԴԻՎ

Հաջորդ ստեղծագործությունը կոչվում է «Յեծելագոր»: «Յեծելագոր» բառը (իտ.՝ «cavallo») - նշանակում է ձի: Յեծելագորը բանակի այն ստորաբաժանումն է, որտեղ մարտական գործողությունների կամ շարժման համար օգտագործվում էր հեծյալ ձի: Շատ մարտերում հեծելագորը որոշիչ դեր է խաղացել:

Խաչատրյանի «Յեծելագոր» պիեսը նվիրված է իր եղբորորդուն՝ Վլադիկին, ով սիրում էր զինվոր խաղալ: Նա նաև խաղալիք հեծելագոր ուներ: Վլադիկը ֆիգուրները դասավորում էր տարբեր կոմբինացիաներով և բոլորին հրավիրում էր խաղալ իր հետ: Եներգետիկ-մոտորային երաժշտությունը հիանալի կերպով փոխանցում է անվախ տղայի մանկական կերպարը: Ակտիվ երաժշտությունը նաև փոխանցում է հեծելագորային բանակի զինվորների խիզախությունը, որն «Ուռաաաա» բացականչություններով պատրաստ է ջարդուփշուր անել թշնամուն: Սմբակների հարվածները պատկերող ռիթմն անցնում է ամբողջ ստեղծագործության միջով, երբեմն՝ թեթևակի փոխախառնված: Բուռն մեղեդին հերթափոխով անցնում է մեկ ստորին ռեգիստրում, այնուհետև՝ վերին:

ՌԻՏԱ

Արամ Իլյիչի ավագ զարմուհին՝ Ռիտան, երեք տարեկանում մնացել է առանց մայրիկի: Հայրը զոհվել է ռազմաճակատում: Արամ Իլյիչն է մեծացրել Ռիտային: Նա դարձել է նկարչուհի: Վաղ հասակից Ռիտան զբաղվել է նկարչությամբ: Նրա նկարները՝ մատիտով էսքիզները, կախված էին նրա բոլոր հարազատների, այդ թվում՝ Արամ Իլյիչի տան պատերին: Նրան է նվիրված «Երաժշտական պատկեր» պիեսը, որը պատմում է Ռիտայի գեղարվեստական հորբիների և նրա յուրահատուկ ներաշխարհի մասին: Մտածված, մտախոհ երաժշտությունը շատ նուրբ, աննկատ կերպով բացահայտում է դեռահասի՝ երիտասարդ աղջկա բանաստեղծական հոգին:

Լսենք ստեղծագործությունը և փորձենք որոշել, թե որ ռեգիստրում է հնչում սեկունդային վառ շարժումներով ճկուն մեղեդին:

ՆԱՍԱՆԱՆ (ՏԱՆԱՆ)

Արամ Իլյիչի տանը շատ էին սիրում ծննդյան տոները ուրախ ու աղմկոտ նշել: Բոլորն ուրախանում էին, ծիծաղում, երգում, պարում: Իսկ Արամ Իլյիչի սիրելի զարմուհին՝ Ռիտայից մեկը՝ Նատալյա Կիսլովան կամ ինչպես մանկուց նրան սիրում էին անվանել հարազատները՝ Տայլան, առանձնանում էր հատկապես իր ճարպկությամբ և գեղեցիկ պարով:

«Ինչպիսի հիանալի մթնոլորտում մենք մեծացանք» ջերմության, պաշտամունքի, մշտական հոգատարության, մեր ինտելեկտուալ և զգացմունքային զարգացման հանդեպ մեծ ուշադրության ներքո: Հետևաբար, ես հիմա փորձում եմ պահպանել բարության և սիրո նույն մթնոլորտ իմ տանը, ինչպես Եստաֆետային մրցակազմը, որպեսզի մանկությանս տարիներին ստացած մարդասիրության դասերը փոխանցեն սեփական երեխաներիս», - ինչու է Արամ Իլյիչի զարմուհին՝ Տայլան: Իսկ «Ծննդյան օր» պիեսվալը՝ նվիրված Տայլային, այս ընտանեկան տոներից մեկի մասին է:

Հաջորդ մանրանվագը, որը կոչվում է «Էտյուդ», նույնպես նվիրված է Տայլային:

Դիմամիկ սկզբի գերակայությունը՝ կրկնվող նոտաները, ռիթմի կտրուկ ընդհատումները, այս հուզական փոփոխություններով հարուստ պիեսում օգնում են զգալ խնդրանքը, ծիծաղը, արցունքները: Չնայած հետապնդող ռիթմին՝ զվաճվոր թեման զուրկ չէ նրբագեղ երանգներից: Այս «Էտյուդ»-ը կարելի է համեմատել տպավորիչ տոկկատինայի հետ: Տոկկատա նշանակում է համերգային վիրտուոզ գործիքային ստեղծագործություն, որի բնորոշ հատկանիշներն են արագ տեմպում շարունակական մոտորային շարժումները, դիմամիկ ձգտումը և երաժշտական նյութի մատուցման հստակ ռիթմը: Դե, տոկկատինան, ինչպես արդեն հասկացաք, փոքրացված տոկկատա է:

ԹԱԳՈՒԴԻ ՕՆԱՆՅԱՆ
երաժշտագետ

Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մերող

(ըստ ծրագրի)

4

ժյուլ Սիմոնի այս գաղափարը դավանում էին հայ ժողովրդի փրկությունը նրա լուսավորությունում ու կրթության մեջ որոնող մտավորականները: Այս դաստիարակությունը ճշմարտության իր ուժը պահպանեց XX դարի հաջորդ տասնամյակներում ևս: Սակայն XIX դարի կեսերին, երբ օրավուր ահագնում էին հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, մշակութային-քաղաքական հավածանքները, Արևմտահայաստանի առաջավոր շատ գործիչներ, որոնք իրենց կրթությունն ստացել էին Եվրոպայում, համեմատելով ազգային դպրոցների խեղճությունը եվրոպական գարգացած երկրների դպրոցների հետ, սրտի խորունկ ցավով ու ավստանքով էին արձանագրում «Չունինք դպրոց, չունինք արուեստանոց. մեր մանուկն օտարին կրթել կու տանք: Ու կը տրտնջանք թե հայոց ազգն աղքատ է, թե հայոց ազգն ազատ է»: Հայկական դպրոցների կազմակերպված, ընդարձակ ջանք է ունեցել Կ. Պոլիսը: Առաջին դպրոցները բացվել են XVIII դարի սկզբին: Յուրաքանչյուր թաղամաս ունեցել է մեկ կամ երկու դպրոց՝ աշակերտների հոծ թվով և ուսուցչական պատկառելի կազմով: Ցեղասպանությանը հաջորդած տարիներին Կ. Պոլիսի բազմաթիվ դպրոցներ գավառներից եկած հայ որբերի ապաստան դարձան:

Քաղաքացիական, բարոյական, հայրենասիրական, աշխատանքային, ֆիզիկական դաստիարակության գործում մեծ կարևորություն պետք է տրվի գեղագիտական դաստիարակությանը, որի բաղկացուցիչ մասը երաժշտական դաստիարակությունն է: Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողի համատեղ ջանքերի գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական բարեվարքություն ձևավորելու համար:

Գեղագիտական դաստիարակության էության մեջ դրսևորվում են երեք կողմեր՝

- անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները,
- գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները,
- գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները սերտորեն կապված են դաստիարակության այլ տեսակների հետ՝ բարոյականություն, մարդասիրություն, բարիություն, քաղաքացիական դաստիարակություն և այլն: Աճող սերնդի ֆիզիկական դաստիարակությունը միշտ էլ եղել է մանկավարժների առաջնահերթ հոգածության խնդիր: Դեռ վաղուց ի վեր մարդկությանը հայտնի է եղել, որ ֆիզիկական դաստիարակությունը մտավոր և գեղագիտական դաստիարակության գրավականն է: Պատահական չէ «Առողջ մարմնում առողջ հոգի» ասացվածքի երկարակեցությունը: Ժամանակակից մանկավարժությունը բժշկության և այլ գիտությունների հետ միասին նոր մակարդակի վրա է բարձրացնում մարդու առողջության մասին հոգածության խնդիրը:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են. Առաջին կարևոր խնդիրը սովորողների ֆիզիկական զարգացումն ու առողջության ամրապնդումն է: Այս խնդիրը պահանջում է՝

- ա) ամեն կերպ նպաստել երեխայի օրգանիզմի զարգացմանն ու ամրապնդմանը,

- բ) կատարելագործել օրգանիզմի գործառնությունները,
- գ) կանխել երեխայի հիվանդությունները, պահպանել առողջությունը:

Ֆիզիկական դաստիարակության հաջորդ խնդիրը ֆիզիկական բարևարքության միջոցով սովորողների կայուն հետաքրքրությունների ու պահանջմունքների դաստիարակումն է: Այսինքն՝ կարող ենք ասել, որ աճող սերնդի և մտավոր, և՛ քաղաքացիական, գեղագիտական, և՛ ֆիզիկական դաստիարակությունը սերտորեն փոխկապակցված են: Հոգևոր երաժշտությունը երաժշտական դաստիարակության կազմակերպման գոչջընթացում շատ կարևոր նշանակություն ունի:

1815 թվականին հիմնադրված Լազարյան ճեմարանն այն հազվագյուտ ուսումնական հաստատություններից էր, որտեղ առանց ազգային ու դավանանքի խտրակամության ուսանում էին հայեր, ռուսներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Դասավանդվել են հանրակրթական առարկաներ, լեզուներ (ռուսերեն, հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, արաբերեն և այլն): Պատրաստվել են դիմորդներ համալսարան ընդունվելու համար, ինչպես նաև պաշտոնյաներ և հայկական դպրոցների ուսուցիչներ:

1827-ին ճեմարանն անվանվել է Արևելյան լեզուների հայկական Լազարյան ինստիտուտ: 1841-ին ճեմարանին կից բացվել է հոգևոր բաժին՝ Հայ եկեղեցու սպասավորներ և հոգևոր դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար: 1872-ի նոր կանոնադրությամբ՝ Լազարյան ճեմարանն ունեցել է ուսումնական 2 հաստատություն՝ դասական գիմնազիա և եռամյա ուսուցմամբ մասնագիտական դասարաններ՝ արևելյան լեզուների ֆակուլտետ, որն իր չափանիշներով համապատասխանել է բարձրագույն ուսումնական հաստատության: ճեմարանի գրադարանի հավաքածուն (1913-ին՝ 40 հազար գիրք) բերվել է Հայաստան և դարձել է Հայաստանի ազգային գրադարանի հիմնարար ֆոնդերից մեկը: Ճեմարանում ուսուցումը թեև ռուսերեն էր, սակայն հայագիտական բոլոր առարկաները դասավանդվել են հայերեն: Ուսուցչադասախոսական կազմի (տնօրենություն ու հոգաբարձություն) և սաների մեծ մասը հայեր էին:

1829-ից ճեմարանին կից գործել է տպարան, որտեղ 13 լեզվով տպագրվել են բազմաթիվ գրքեր, ինչպես նաև դասագրքեր հայկական դպրոցների համար:

Ճեմարանը գործել է ավելի քան 1 դար: 1921-ին վերակազմավորվել է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի, որտեղ 1921–1953 թվականներին գործել է Մոսկվայի հայ մշակույթի տունը: 1970-ական թվականներից ճեմարանի համալիրը հանձնվել է Հայաստանի կառավարության տնօրինությանը, ՀՀ անկախությունից հետո տրամադրվել է Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը:

Անկասկած պետք է խոսենք նաև Ներսիսյան դպրոցի մասին, քանի որ այն սփյուռքում գտնվող ամենախոշոր և հռչակավոր դպրոցներից մեկն է: Այն սկզբնապես կոչվել է Թիֆլիսի հայոց ուսումնարան, 1826–1837 թվականներին՝ Թիֆլիսի Ներսիսյան հայոց ուսումնարան: Առաջին ուսումնական տարուն ունեցել է 3 դասարան, 80 աշակերտ, հա-

ջորդ 2 տարիներին ավելացել են 4-րդ և 5-րդ դասարանները. սովորողների թիվը հասել է 360-ի: 1836-ին փակվել է 1837-ին վերաբացվել է որպես հոգևոր սեմինարիա՝ 4 դասարանով: Հիմնադրման օրից ունեցել է տպարան: Առաջին տեսուչը (1824–1830) առաջադեմ մանկավարժ, հասարակական, քաղաքական գործիչ Հարություն Ալանդարյանն էր, որը մշակել է դպրոցի վարչական և բարոյակրթական աշխատանքների կանոնները: Նրա տեսչության ժամանակահատվածն անվանվել է «դար Ալանդարյանի» և համարվել դպրոցի գործունեության ամենաբեղուն շրջանը: 1843-ին Ներսես Ե Աշտարակեցին, ընտրվելով կաթողիկոս, դպրոցը վերակառուցել է միջնակարգի ծրագրով, իսկ 1848-ին ստեղծել է հոգաբարձություն: Տարբեր տարիների դպրոցի տեսուչներ են եղել Գաբրիել Պատկանյանը, Պետրոս Շանշյանը, Ստեփանոս Նազարյանը, Սեդրակ Մանդինյանը և ուրիշներ:

1951-ին դպրոցի մի խումբ սաների նախաձեռնությամբ երևանում ստեղծվել է ներսիսյանցիների ընկերությունը, որը կազմակերպում էր նախկին շրջանավարտների հավաքներ, 1965-ին հրատարակել է «Ամնոռաց դեմքեր. Ներսիսյան դպրոցի սաներ» գիրքը: Ներսիսյան դպրոցի մասին գրվել են տասնյակ այլ գործեր՝ արժուրելով նրա դերն ու նշանակությունը կրթության ոլորտում:

Հարկ է նշել, որ հայկական դպրոցներ են եղել նաև սիրիահայ գաղութներում, Նիկոզիայում, Հնդկաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և աշխարհի այլ կետերում:

Երաժշտության դասերին մեծ կարևորություն ունի անհատական և խմբային երգեցողությունը, հոգևոր երաժշտության ունկնդրումը: Բաց դասերին, հոգևոր երաժշտությունների մանկական փառատոնները, ինչպես նաև այցելություն տարբեր կրթօջախներ, կապ Հայաստանյաց առաքելական եկեղեցու հետ, որպես պետական կրոն և նրա դերն ընդհանրապես երեխաների կրթության և դաստիարակության գործում: Հոգևոր երաժշտությունն ընդգրկում է հոգևոր և բարոյական լուրջ գաղափարներ: Այն ներգործելով մարդու ներաշխարհի վրա, առաջացնում է նոր հույզեր, զգացողություններ, լուսավոր մտքեր: Չէ՞ որ, «Երաժշտություն» առարկայի հիմնական բովանդակությունն է այն երաժշտությունը, որի հիման վրա տարիների ընթացքում դաստիարակվում ու զարգանում են աշակերտները: Ուստի շատ կարևոր է նյութի ճիշտ ընտրությունը, և ճիշտ դասավանդումը, հոգևոր երաժշտության հետևողական ուսուցումը, թե որպես անհատական և խմբային երգեցողություն, նաև որպես երաժշտական ունկնդրման նյութ: Այսպիսով, հոգևոր երաժշտությունը հայկական մշակույթի անբաժանելի մասն է: Եվ, դա կարող է իր մեծագույն դերն ունենալ աշակերտի հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացմանը, գեղեցիկի ընկալմանը:

ԱՆԻ ԱՆՈՒՀԱՐՅԱՆ
Խ.Արուսյանի անվան Պետական մանկավարժական համալսարանի երաժշտության կրթության բաժնի 2-րդ կուրսի մագիստրոսականի ուսանող

Ծովինար Չալոյանի դասախոսությունները

«Հայկական վերածնունդ»

Այկաբը նախորդ համարում

Հայկական առակները նույնպես որոշիչ դեր են ունեցել: XII-XIII դարերում Անիի թագավորությունում Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին Կիլիկիայում դասակարգերի սրման պայմաններում մերկացնում են եկեղեցական սպասավորներից, նրանց շահամոլությունը, բռնությունը: Այս ամենը հիշեցնում է Բովաչոյի նովելները (XIV դ.), որոնք մտան եվրոպական Վերածննդի գրականության գանձարանի մեջ:

Հայտնի է, որ հելլենիզմը թե՛ Հայաստանում և թե՛ Արևմուտքում Վերածննդի հիմնարկներից մեկն էր: Դա դեմոկրատական ուղղություն էր, որն անշուշտ հենվում էր ռեալիստական սկզբունքի վրա՝ արտահայտելով ոչ միայն կենցաղային, այլև կրոնաառասպելական բովանդակություն:

«Հելլենիզմը,- գրում է Վ. Չալոյանն իր «Հայկական Ռենեսանս» գրքում,- հայկական մանրանկարչության մեջ արտահայտվում է խորանների ճարտարապետական ձևերի, մոնումենտալ կառույցների կոմպոզիցիայի, երանգավորման, դիմանկարների անհատականության միջոցով: Այս բոլորի հիմքն օբյեկտիվ ճշմարտության անհրաժեշտությունն էր: Այս նոր արվեստը ձևավորվում էր՝ ընդգրկելով իր մեջ նոր գաղափարախոսություն» (Չալոյան Վ. Կ., Հայկական Ռենեսանս: Երևան, 1964, էջ 121): Նման դեմոկրատական մոտեցումը թե՛ գրականության, թե՛ արվեստի այլ ձևերի մեջ բացահայտում էր անհատի ներաշխարհին իր տարբեր դրսևորումներով և կարողություններով. ընդունակ ներգործելու կրոնական և սոցիալական Միջնադարի վրա: X-XIII

դարերում անմախաղեպ ծաղկում ապրեցին ճարտարապետությունը, երաժշտությունը, թատրոնը, իսկ որմնանկարչության մասին վկայում են Աղթամարի, Հաղպատի, Ախթալայի, ինչպես նաև Անիի ու Դվինի ճարտարապետական հուշարձանները: Առաջատար էր մանրանկարչությունը, իսկ սրբանկարչությանը հայ եկեղեցին նույնիսկ թշնամաբար էր վերաբերվում: Նշենք, որ XII-XIII դարերում բուն Հայաստանում, իսկ XIII-XIV դարերում՝ Կիլիկյան Հայաստանում, մանրանկարչությունը հասավ այն մակարդակին, որ կարելի էր որոշել, թե որ դպրոցին և ուղղությանն է հարում տվյալ ստեղծագործությունը: Հայկական մանրանկարչությանը հատուկ են կոմպոզիցիոն ներդաշնակությունը, պատկերների գեղարվեստական մշակումը:

Արվեստաբան Վ. Վ. Ստասովն իր «Հայկական ձեռագրերը և նրանց զարդաբանականությունը» (1886 թ. Մոսկվա) աշխատության մեջ գրում է. «Հայ մանրանկարիչները գլխազարդերի, գլխատառերի և ձեռագրերի լուսանցքների պատկերների մեջ անսպառ երևակայությամբ, անսահմանափակ հնարամտությամբ և նուրբ ճաշակով օժտված մարդիկ են՝ ինչպես ձևերում, այնպես էլ գույներում: Ներկերի փայլը և կատարման նրբությունը ձեռագրերի նկարները դարձնում են մանրանկարչության առանձնահատկություն» (Չալոյան Վ. Կ., Հայկական Ռենեսանս: Երևան, 1964, էջ 133):


Ուշագրավ է, որ ձեռագրերում ճարտարապետական պատկերները հելլենիստական արվեստի վերարտադրություններ են: Որպես ապացույց կարող են ծառայել 989 թ. էջմիածնի նշանավոր Ավետարանի մի շարք նկարները,

որոնց վրա նկատելի են հելլենիստական արվեստի գեղարվեստական թեմաներ՝ իրենց նոր մեկնաբանմամբ:

Հայ մանրանկարիչները կարողանում էին տեսնել բնությունը, ճանաչել և վերարտադրել այն: Հովհաննես Իմաստասերը (XII դ.) պնդում էր, որ գեղարվեստական արժեքներ ստեղծելու համար անհրաժեշտ է սովորել բնությունից: Այդ միտքն իրականացրել են հայ մանրանկարիչները: Նշենք Կիլիկյան Հայաստանի պետական գործիչ Սմբատ Սպարապետի (Գունաստաբլ) պատկերով պատկերազարդված ձեռագրի մանրանկարները կամ Թորոս Ռոսլինի «Ավետում»ը, որտեղ հրեշտակի պատկերը ներկայացված է բարձր գեղարվեստական վարպետությամբ, կամ էլ Հեթում թագավորի համար «Ճաշոց» ձեռագրի (XIII դ.) մանրանկարչությունը: Նշենք նաև Կիպրիոնի և Գրիգոր Տաթևացու դիմանկարները՝ կատարված ռեալիստորեն և մեծ վարպետությամբ: Կա վարկած, որ այդ մանրանկարներն ունեցել են իրական նախակերպարներ: Գրիգոր Տաթևացին պատկերված է իր աշակերտների հետ. ուսուցիչ կեցվածքն իշխող է, հայացքը խոր և թափանցող: Մատենագրական աղբյուրները հաստատում են, որ դիմանկարն արված է բնորոշից: Դա Տաթևի ռեալիստական դպրոցին բնորոշ ստեղծագործություն է:

Հարունակելի
ՇՈՒԿՆԱՐ ՉԱԼՈՅԱՆԻ
Գեղագիտության պատմություն գրքից,
Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆԸ

«Ազգային նվագարանների համույթներ» ուսումնական չեռնարկի շնորհանդեսը «Նարեկայի» արվեստի միությունում




Հունիսի 30-ին «Նարեկայի» արվեստի միությունում տեղի ունեցավ Հելբերտ Ասատրյանի՝ «Ազգային նվագարանների համույթներ» ուսումնական ծրագրի շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Լիլիթ Եփրեմյանն ու Հայ ավանդական երաժշտության կատարողական ամբիոնի վարիչ Մարգարիտ Ոսկանյանը, ինչպես նաև իսաչատուր արվեստի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Առնո Բաբաջանյանի և Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջների դասախոսները:

Շնորհանդեսին ներկա էր նաև «Նարեկայի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանն ու ողջույնի խոսքն ուղեց ծեռնարկի հեղինակին: «Մենք պատիվ ենք ունենում շփվելու բազմաթիվ արվեստագետների հետ, բայց հազվադեպ է հանդիպում, երբ մարդ բացի երաժիշտ լինելուց, լինում է նաև այնպիսի անհատականություն, ով չափազանց անանձնասեր է, չափազանց նվիրված է իր ազգին և ոգով ու սրտով ծառայում է հայկական մշակույթի պահպանման առաքելությանը: Միայն այդ բացառիկ մարդկանցից մեկն էլ Հելբերտ Ասատրյանն է»:

Միջոցառման ուղեկցվեց երաժշտական համարներով: Երեկոյի ընթացքում հնչեցին ուսումնական ծեռնարկում գետնորդ ստեղծագործություններից «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի (գեղարվեստական ղեկավար՝ Հովիվ Սահակյան, դիրիժոր՝ Հելբերտ Ասատրյան), Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի քանոնահարների անսամբլի (ղեկավար՝ Շուշանիկ Սաղաթեյան) և դուդուկահարների քառյակի (ղեկավար՝ Վաչե Փաշինյան) կատարմամբ:

«Ազգային նվագարանների համույթներ» ուսումնական



Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի դուդուկահարների քառյակ, ղեկավար՝ Վաչե Փաշինյան



Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի քանոնահարների անսամբլ, ղեկավար՝ Շուշանիկ Սաղաթեյան

ծեռնարկն իրենից ներկայացնում է ազգային նվագարանների համար հայկական ժողովրդական երգերի և պարերի անակների անսամբլային մշակումների ժողովածու: Չեռնար-

կուն գետնորդ են Կոմիտասի երկերը («Ազգային օրհներգ», «Հով արեք, սարեր ջան», «Էսօր ուրբաթ է», «Երկնից, գետնից», «Կալի երգ»), հայ հոգևոր (Գրիգոր Պաղիա-վունի «Ով գարնանալի») և պրոֆեսիոնալ (Իսաչատուր Ավետիսյան՝ «Կանոն երկու դուդուկի համար», «Մեղեդի երկու դուդուկի համար», «Տաղ սիրո», «Փոքրիկ պիես», Միհրան Դեմիրճյան՝ «Կոնցերտային ֆանտազիա», Վաղարշակ Կոտոյան՝ «Չկոնցերտ», «Նազելի», Ալեքսանդր Ալեքսանդրյան՝ «Ջերմանի», Արամ Մերանգուլյան՝ «Անահիտ») արվեստին պատկանող ստեղծագործությունները, ինչպես նաև աշուղական արվեստի մոմունտներ (Աշուղ Շահին՝ «Ալմաստը շողում է», «Բինգյոլի») ու հայ կոմպոզիտորների կողմից արված կոմիտասյան (Ռուբեն Ալթունյանի «Ծիրանի ծառ», «Յաման յար», Ռոբերտ Աթայանի երկու երգ. «Սարերի վրով» և «Երի, երի ջան», Մարինե Ասատրյանի «Ջուր կուգա վերին սարեն», «Թագվորի մեր» և ժողովրդական երգերի մշակումները (Թաթուլ Ալթունյանի «Նուբար-նուբար», «Հովիտ», «Իջավ մարմանդ իրկուն», «Ծաղկասարի կանաչ լանջին», «Թելլո», Շուշանիկ Սաղաթեյանի «Նավավար»):

Ստեղծագործությունները մշակված են ազգային նվագարանների տարբեր գործիքակազմերի համար (դուդուկ, տրիո, կվարտետ, կվինտետ) և համապատասխանում են սանթուր, քամանչա, թառ, ուր, քանոն, բլուլ, դուդուկ, մեծ բամբուկ գործիքների կատարողական և տեխնիկական հնարավորություններին: Չեռնարկը նախատեսված է երաժշտական քոլեջներում դասավանդվող «Համույթ» առարկայի նվագագանկը համալրելու համար:

Նշենք նաև, որ «Ազգային նվագարանների համույթներ» ժողովածուի կազմում գործում իր մասնագիտական աջակցությունն է ունեցել կոմպոզիտոր, թառահար, ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Իսաչատրյանը:

Հանրաձայնաչ «Կուս» ֆառյակը կրկին Երեւանում էր

1

Ստեղծագործական տարիների ընթացքում քառյակը բազմիցս մասնակցել է անվանի երաժշտական փառատոների (Շվարցենբերգի Շուբերտիադա, Բոնի Բեթովյանյան, Ջալցբուրգյան և Էդինբուրգյան փառատոները և այլն), դարձել է միջազգային մրցույթների դափնեկիր, ելույթներ է ունեցել աշխարհի ամենահայտնի համերգային հարթակներում, այդ թվում՝ Ամստերդամի Կոնսերտգեբաու, Վիեննայի Կոնցերտհաուս, Լոնդոնի Ուիգմոր Հոլ, Նյու-Յորքի Կարնեգի Հոլ համերգասրահներում և այլուր: Հյուրախաղերով մեկնել են ԱՄՆ, Ավստրալիա, Հարավային Ամերիկա և Ճապոնիա:

«Կուս»-ը դարձավ այն հազվագյուտ կոլեկտիվներից մեկը, որին Նիպոն երաժշտական հիմնադրամը ժամանակավորապես իրավունք տրվեց նվագել հանրաձայնաչ «Պագանինի» քառյակի գործիքներով: Ինչպես հայտնի է, կոլեկտիվը նվագում է Անտոնիո Ստրադիվարիի կողմից պատրաստված գործիքներով, որոնք ժամանակին պատկանել են Նիկոլո Պագանինիին (այստեղից էլ կոլեկտիվի անունը): 2019-ին Տոկիոյի Սունտորի համերգասրահի հրավերով «Կուս» քառյակը այս գործիքներով կատարել է Բեթովյանի լարային քառյակների ամբողջական շարքը:

Պահելով անսամբլային կատարողականության բարձր չափանիշները, «Կուս» քառյակն ընդլայնում է իր ունկնդիրների շրջանակը շնորհիվ նորարարական մոտեցման, հետաքրքիր համերգային ծրագրերի: Կոլեկտիվի նվագացանկը ներառում է Վերածննդի ժամանակաշրջանի երաժշտությունից մինչև ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: «Kulturadio»-ի հետ միասին քառյակը պարբերաբար համերգներ է կազմակերպում Բեռլինի տարբեր գիշերային ակումբներում՝ երիտասարդ սերնդի մեջ դասական երաժշտություն հանդեպ սերնդային համար: Լարային քառյակի ժանրին նոր մոտեցմամբ, ինչպես նաև երաժշտության և գրույցի համադրությամբ՝ երաժիշտներն ունկնդրի համար ստեղծում են հրաշալի հնարավորություն նոր ստեղծագործությունների հայտնագործման և վերաիմաստավորման համար:

Նշենք որ 2019-ի աշնանը քառյակը հանդես էր եկել համերգային ծրագրով «Երևանյան Հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում: Այս անգամ քառյակը ելույթներ ունեցավ մի շարք միջոցառումներով: Հունիսի 17-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահի ներքնահարկում տեղի ունեցավ քառյակի ջութակահարներ Յանա Կուսի և Օլիվեր Ուիլլեի ստեղծագործական զրույցը:

Հունիսի 18-ին նույն համերգասրահի դահլիճում՝ ճանաչված քառյակի համերգն էր, որի ընթացքում հնչեցին Յոզեֆ Հայդն, Լյուդվիգ վան Բեթովյան, Ֆրանց Շուբերտ, Լեո Յանաչեկ, Կոմիտաս, Բելա Բարտոկ, Դյորդ Կուրտագ:

Հունիսի 19-ին կոնսերվատորիայում և «Առնո Բաբաջանյան» համերգասրահում քառյակի արտիստները միաժամանակ անցկացրեցին վարպետության դասեր: Թավջութակա-



Յանա Կուսի վարպետության դասը



Ուիլլիամ Քոլմանի վարպետության դասը



«Կուս» քառյակ

հար Միքայել Հախնազարյանը վարպետության դասն անցկացրեց «Առնո Բաբաջանյան» համերգասրահում «Երևան» լարային քառյակի հետ: Դասի համար ընտրված էր Լեոն Զաուլյանի 7-րդ Կվարտետը: Ալտահար Ուիլլիամ Քոլմանի վարպետության դասը տեղի ունեցավ նույն համերգասրահի Ներքնահարկում: Ջութակահարներ Յանա Կուսի դասն



«Կվարտետում շատ կարևոր է, որ երաժիշտները բոլոր նվագաբաժիններն իմանան: Միշտ փորձեք ամբողջությամբ նվագել, սկզբից մտածեք ավելի լայն: Նոտաները պետք է Agitato լինեն, ոչ թե՛ դուբ», - ուսանողների հետ աշխատանքի ընթացքում ասաց թավջութակահար Միքայել Հախնազարյանը:



«Պետք է հայտնագործություն անել ու կատարել, ոչ թե պարզապես նոտաներ նվագել: Միշտ հնչեցրեք տեմպի մեջ, որ հասկանաք՝ որն է գործի գաղափարը», - ուսանողներին ասաց Օլիվեր Ուիլլեն:

անցկացվեց ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիայում և Օլիվեր Ուիլլեի դասը՝ ԵՊԿ Օպերային ստուդիայում:

Չնայած որ վարպետության դասերը նախատեսված էին միայն լարային քառյակների համար, սակայն հանդիպմանը՝ որպես ազատ ունկնդիր, կարող էին ներկա գտնվել բոլոր ցանկացողները:

Նյութը պատրաստեց՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿՐՈՒՎՈՍՅԱՆԸ

Շնորհանդես. «Ալեքսանդր Սպենդիարյան. չայնասկավառակով պատկերագիր»

1 Զուհիսի 14-ին, «Երևան, իմ սեր» հիմնադրամի շենքում անցկացվեց «Ալեքսանդր Սպենդիարյան. չայնասկավառակով պատկերագիր» շնորհանդեսը: Միջոցառումը կազմակերպել էր կոմպոզիտորի տուն-թանգարանը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Հիշեցնենք, որ 2021-ին լրացավ կոմպոզիտոր, հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, դիրիժոր, հասարակական գործիչ, մանկավարժ Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը, որն ընդգրկվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակված մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թթ. օրացույցում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, կոմպոզիտորի տուն-թանգարանի նախաձեռնությամբ և համակարգմամբ իրականացվեցին բազմաբնույթ նախագծեր Հայաստանում և արտերկրում: Դրանց թվում՝ կոմպոզիտորի տուն-թանգարանի ներկայացրած պատկերագիրը արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավանությանը՝ մասնակցության ծրագրով ստանալով աջակցություն:

Պատկերագիրը դարձավ հորեյանական նախագծերի զագրթնակետը: Նախապատրաստական աշխատանքները տևել են երկու տարի՝ 2019-2021 թթ. (ծրագրի ղեկավար և գլխավոր կազմող-խմբագիր՝ Մարինե Օթարյան, կազմողներ՝ Աստղիկ Հարությունյան, Հասմիկ Համբարյան, գլխավոր խմբագիր՝ Հասմիկ Գուլակյան, թարգմանիչ՝ Գոհար Մելիքյան): Գրքում տեղ են գտել Հայաստանի և արտերկրի շուրջ 22 թանգարաններից ու արխիվներից հավաքագրված 972 նյութեր, որոնց նշանակալի մասը հանրայնացվել է առաջին անգամ: Ներկայացվող արժեքավոր նյութերը՝ լուսանկարներ, փաստաթղթեր, նամակներ, հուշեր, գրախոսականներ, համերգների ազդագրեր ու ծրագրեր, գեղանկարներ, հողվածներ, անձնական իրերի լուսանկարներ, ինչպես նաև պատմաիկներ կոմպոզիտորի ինքնակենսագրությունից, առավել տեսանելի ու պատկերավոր են դարձնում նրա կերպարը, միջավայրը և փոխհարաբերությունները ժամանակի երևելի գործիչների հետ: Ներկայացված են նաև մեծ երաժշտի հիշատակի հավերժացմանը վերաբերվող փաստեր ու վկայություններ:

Պատկերագրում զետեղված ձայնասկավառակի ձայնագրությունն իրականացրել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ տնօրեն Սարգիս Բալբաբյանի ղեկավարությամբ: Ձայնասկավառակում տեղ են գտել կոմպոզիտորի 10 սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ (ՀՊՄՆ, դիրիժոր՝ Վահագն Պապյան, Կարեն Շահգալյան՝ ջութակ, Սևակ Ավանեսյան՝ թավջութակ, Արմինե Գրիգորյան և Մարիաննա Շիրինյան՝ դաշնամուր): Ստեղծագործությունները նորագույն տեխնոլոգիաներով ձայնագրելը Սպենդիարյանի տուն-թանգարանի և ՀՊՄՆ մտահղացումն է՝ XXI դարի երաժշտասերներին նորովի մեկնաբանմամբ հասանելի դարձնելու նպատակով: Ձայնագրությունները հնարավոր է ունենդրել նաև գիրք-ալբոմում զետեղված QR կոդերի միջոցով:

Պատկերագիրը հրատարակվել է «Ամտարես» հրատարակչությունում: Իր տեսակով բացառիկ այս նախագիծը երկրպետ է՝ հայերեն և անգլերեն, որը հնարավորություն կտա հանրահռչակելու հայ մեծ դասականի կյանքի և ստեղծագործական ուղին նաև միջազգային ասպարեզում:

Շնորհանդեսին ներկա էին պետական այրեր, մշակույթի գործիչներ, մտավորականներ:

Միջոցառման բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը: «Սպենդիարյանի կատարած գործը մեր հանրությանը մշակութայնացնելու, համաեվրոպական արժեքային համակարգի վրա դնելու առումով, ուղղակի արժանի է հիացումի, խոնարհման՝ իմ պատկերացմամբ հայ մտավորականի ամենաբարձր չափ»



կոմպոզիտորի համամարդկային նշանակության երաժշտական գործունեությունը չէր կարող անտեսվել համապատասխան միջազգային կառույցների կողմից: Որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի անդամ ենք երկվեզու ժողովածուի հրատարակումն ու ձայնասկավառակի թողարկումը: Վստահ ենք, որ Սպենդիարյանի ժառանգությունն առաջ մղելու մեր համատեղ ջանքերն ավելի կմեծացնեն հայ երաժշտության և արվեստի համամարդկային նշանակության ընկալումն աշխարհում»:

Գիրքը ներկայացրեց արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լիլիթ Երնջակյանը. «Սպենդիարյանը հայ երաժշտության հզոր սյուներից մեկն է: Բառիս բուն և խորհրդանշական իմաստներով նրա անունն է կրում օպերային թատրոնը, և նրա անունը հավերժացել է հայ օպերային արվեստի փայլուն եռյակը ներկայացնող մեծերի՝ Տիգրան Չուխաջյանի և Արմեն Տիգրանյանի զուգորդությամբ: Սպենդիարյանի կյանքը որքան



բազմաբովանդակ է եղել, հարուստ իր ստեղծագործական փոխհարաբերություններով, արվեստագիտական շփումներով, այնքան էլ նվիրված է եղել իր հայրենի մշակույթի կայացման գործին: Ահա այս պատկերագրում լայնորեն արտացոլված է այդ ամբողջ համատեքստը: Սա մի լայն պատմամշակութային տեքստ ներկայացնող հրատարակություն է, որտեղ ներառված են բոլոր հետաքրքիր, անհրաժեշտ նրբությունները, բոլոր հետաքրքիր անձնավորությունները, որոնց հետ ստեղծագործական, մարդկային և գործընկերային հարաբերությունների մեջ է եղել Սպենդիարյանը: Հույս ենք հայտնում, որ տուն-թանգարանի աշխատանքները այս ուղորտում չեն ավարտվի»:



Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Մարինե Օթարյանը ողջունեց հյուրերին՝ շնորհակալություն հայտնելով բոլոր հովանավորներին և գործընկերներին նախագծի կոչման համար: «Ես այս ծրագիրը համարում եմ կոմպոզիտորի հորեյանական նախագծերի ամենաարժեքավոր ձեռքբերումը, կուլմինացիան, բայց ոչ ավարտը: Կարծում եմ, որ այս պատկերագիրը նոր էջեր է բացում սպենդիարյանագի-

տության մեջ, և մենք արդյունքները կճաշակենք շատ ավելի հետո: Այս նախագիծը նաև համարում ենք Սպենդիարյանի տուն-թանգարանի ամենակարևոր ձեռքբերումն այն առումով, որ ծանր տարիների ընթացքում՝ թուլիդ, պատերազմ, իրականացվել է հավաքչական աշխատանք, թվայնացվել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Սպենդիարյանի ամբողջ ֆոնդը՝ մեր և այդ թանգարանի գիտաշխատողների ջանքերով, և այդ ամբողջ ուսումնասիրությունները մեզ համար Սպենդիարյան մարդու, քաղաքացու, երաժշտի, մանկավարժի մասին նոր էջեր է բացել: Սպենդիարյանը բոլորիս համախմբել է այստեղ, և շնորհակալ ենք նրան, որ մեզ պատիվ է տվել լինել իր աշխարհում», - իր խոսքը եզրափակեց տիկին Օթարյանը:


Ցուցադրվեց նախագծի նախապատրաստական աշխատանքների մասին պատմող տեսաշար:

Երեկոյի համերգային բաժնում հնչեցին Սպենդիարյանի կամերային ստեղծագործություններից Ա. Խաչատրյանի անվան եռյակի կատարմամբ՝ Արմինե Գրիգորյան (դաշնամուր), Կարեն Շահգալյան (ջութակ), Արտյոմ Իոանիսյան (թավջութակ):

Շենքի պատշգամբում հյուրերը ծանոթացան «Մեկ ցու-

ցանմուշի պատմության» կոմպոզիտորի տուն-թանգարանից միայն մեկ օրով այստեղ հանգրվանած Արարատյան թեմի առաջնորդարանի շենքի մանրակերտին: Հայերեն, ռուսերեն և անգլերեն աուդիո ուղեցույցով այս ցուցանմուշը պատմում է, թե ինչպես կոմպոզիտորին այս շենքում հատկացվեց աշխատասենյակ, որտեղ նա գրեց իր հայաստանյան առաջին և միակ ստեղծագործությունը՝ «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ սյուիտը: Ի դեպ, շնորհանդեսի վայրը նույնպես պատահական չէր ընտրված. այն շատ մոտ էր հենց Առաջնորդարանի շենքին, որտեղ կոմպոզիտորը ոգեշնչվել էր պատշգամբից բացվող տեսարանով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Երաժշտագետ,
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
ավագ գիտաշխատող



Կարեն Շահգալյան, Արմինե Գրիգորյան



ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Երաժշտագետ,
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
ավագ գիտաշխատող

ОБЩЕСТВО ГРАФА ВАЛЬЗЕГГА (фельетон)

Что побудило меня написать эту статью? Были у меня знакомые, которые называли себя композиторами.
— Ну что ж, очень приятно. У кого учились? О—о—о, великолепно! Вы писали ноты?
— Какие ноты? Не до этого мне. Сколько произведений в голове, а вы — но—ты! Нет, нот я не пишу, да и не знаю я их. Синтезатор под рукой, а то приятно насвищу — он мне и напишет, и оркеструет. Я композитор, а не аранжировщик!!!
Аналогичные диалоги я все чаще слышу и в быту, и по телевидению.
А что же Гайдн, Моцарт, Бетховен и другие композиторы прошлого? Скажи им такое и реакция была бы однозначной. Сколько опер написал Рихард Вагнер, мало того, и либретто написал он же. Даже новые инструменты для них сконструировал! Ноты к стати, тоже он писал, и оркестровал все он. И все именитые композиторы — от классиков до современников все делали сами. И наряду с ними всплывает такое ли-

цо, как граф Вальзегг, известной тем, что написал по случаю смерти своей жены Реквием, рукою... правильно, Моцарта. Время, конечно, все расставило на свои места. Сам Вальзегг канул в Лету вслед за своей супругой. Он—то канул, а наследники остались.
Справедливости ради отметим, что Вальзегг был недурным музыкантом. Слабость его заключалась в том, что он переписывал (это он великолепно умел) заказанные другим композиторам (за деньги, конечно) произведения и выдавал их за свои.
Я не представляю себе, скажем, художника, который, кому—то начертит в воздухе пальцем что—то, а потом скажет: “Иди и нарисуй в таком духе. Но автор — Я”. Абсурд! Композитор, не умеющий записать и оркестровать, — это, как говаривал профессор С. В. Коптев, — фантазитор — и не более. Хочется продолжить тему и назвать эту братию наследников Вальзегга плагиаторами. Слушаешь их песни и

кажется, что это одна и та же заунывная мелодия, исполненная надтреснутыми, прокуренными голосами на слова, типа:
Մեր ի-ի-իմ, դու ինչպես դեղնա-ա-ա-ա տերե-ե-և,
Մեր ի-ի-իմ, դու որպե-ե-ե-ես հանգ-ա-ա-ա արև...
(слова автора этих строк как пародия).
Так что, может организуем для таких лжеавторов общество под названием “Союз плагиаторов”, или, как в былое время в Европе, “Граф Вальзегг музикферайн” (“Музыкальное общество Графа Вальзегга”), а то путаются под ногами настоящих музыкантов всякие...
САРКИС ОГАНЕСЯН
кандидат искусствоведения,
преподаватель Ереванской специальной
музыкальной школы N13

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



ԵՊԿ նախկին ուսանող Պոլինա Շարաֆյանը հունական «Միմաս» միջազգային երաժշտական փառատոնին երաժշտական փառատոնին երիտասարդ ջութակահարների անվանակարգում արժանացել է առաջին մրցանակի:

ցավ ընդհանուր դաշնամուրի ամբիոնի ուսանողների համերգը: Ելույթ ունեցան Ն. Հարությունյանի, Ա. Շուրուբադյանի, Ռ. Սիմվորյանի, Ջ. Արվյանի, Ջ. Միկոյանի, Մ. Հայրապետյանի, Ն. Արմենյանի, Ե. Իսայանի, Ի. Կոստանդյանի, Լ. Գրիգորյանի, Ի. Մամիկոնովայի, Ն. Ենգիբարյանի, Ա. Գևորգյանի, Կ. Ավետիսյանի ուսանողները: Ամբիոնի վարիչ՝ դոցենտ Ա. Ղազարյան: Համերգին հնչեցին հայ, ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունները:

յին, լարային գործիքների, ազգային երգեցողության և կատարողական արվեստի, ակադեմիական երգեցողության, փողային գործիքների, ջազ-փոփ երգեցողության ամբիոնների շահառու սաները:

Երեկոյի ընթացքում իր ընկերներին բեմ էր հրավիրում նույն կրթաթղթակին արժանացած բլուշահար Անի Ռուբենյանը:

Ցանկանում ենք հատուկ նշել ռեկտորի օգնական Շուշանիկ Մեհրաբյանի մեծ ներդրումը համերգի կազմակերպման գործում:

ԵՊԿ ակադեմիական երգեցողության բաժնի մագիստրոսական ուսանող Ջուլիանա Գրիգորյանը (դասախոս՝ դոցենտ Արմենուհի Բազինյան) արժանացել է Գրան պրի մրցանակի Լեհաստանի Ստանիսլավ Սոնյուշկոյի անվան 11-րդ միջազգային երգեցողության մրցույթում:

Հունիսի 7-ին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում տեղի ունե-

վեց Հունիսի 15-ին, ԵՊԿ IV-րդ դահլիճում կայացավ Հայ Օգնության ֆունդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Արսեն Սայանի անվան կրթաթղթակ» ծրագրի շահառու՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների համերգը: Համերգին հնչեցին՝ դասական, հայ ժողովրդական և ջազային ստեղծագործությունները: «Արսեն Սայանի անվան կրթաթղթակի» շահառուներին նվիրված երեկոյին մասնակցեցին դաշնամուրա-

Խաչատուր Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները

Խաչատուր Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը այս տարի նշում է հիմնադրման 100-ամյակը: Այս կապակցությամբ հունիսի 20-ին ՀՊՄՀ-ում տեղի էր ունեցել համալսարանի հիմնադրման 100-ամյակի առիթով թողարկված դրոշմանիշի մարման արարողությունը, որն իրականացրեցին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոստի բաժնի ղեկավար Ծովինար Գալստյանը, «Հայփոստ» ՓԲԸ կոմերցիոն տնօրեն Յուլյա Հովհաննիսյանը, ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և Հայաստանի ֆիլատելիստների միության նախագահ Հովիկ Մուսայելյանը:

«Մանկավարժական համալսարանի 100-ամյա տարեգրության մեջ ամրագրված են գիտության և կրթության ոլորտներում ներդրված մեծ արժեքներ՝ ուղղված հանրապետության կրթության, ուսուցչական և ընդհանրապես մանկավարժական ոլորտի կոնկրետ որակական փոփոխություններ ապահովելուն», - իր խոսքում նշեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Իսկ ԿԳՄՍ նախարարի տեղակալը նշեց. «Մանկավարժական համալսարանն ուսուցիչների պատրաստման տես-



անկյունից մեր հիմնական դարձնում է՝ 100-ամյա իր պատմությամբ ուրույն տեղ զբաղեցնելով կրթական համակարգում և ընդհանրապես երկրի զարգացման գործում: Առաջին հերթին շնորհավորում են բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներին: Առաջին տարիներին դուր լուրջ առաքելություն ունեք, քանի որ մեր կրթական համակարգը թևակոխում է բարեփոխումների փուլ: Բոլորիդ ձեռքբերումներով լի տարի են մաղթում»:

Հայաստանի ֆիլատելիստների միության նախագահ Հովիկ Մուսայելյանն էլ ընդգծեց, որ նամակահիշը համարվում է պետության խորհրդանիշներից մեկը, ուստի նմանօրինակ իրադարձությունը շատ խորհրդանշական է 100-ամյա պատմություն ունեցող համալսարանի համար:

Միջոցառման ավարտին ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլ-



տեղի սաները հանդես եկան պարային կատարումով:

Նամակահիշի վերևի հատվածում պատկերված է «ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՎԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ» գրառումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև՝ Խաչատուր Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին

նվիրված լոգոտիպը:

Թողարկման օրը՝ 20 հունիսի 2022 թ.

Դիզայնը՝ Ռեմ Սահակյանի Տպարանը՝ Cartor, Ֆրանսիա
Չափսերը՝ 30,0 x 40,0 մմ
Մեկ թերթի վրա՝ 10 հ.
Տպաքանակը՝ 20 000 հ.

Այս իրադարձությունով տրվեց բուհի 100-ամյակին նվիրված պաշտոնական միջոցառումների մեկնարկը: Նշենք նաև, որ գլխավոր միջոցառումը՝ գալա համերգը, տեղի կունենա նոյեմբերի 6-ին՝ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը նշում է հիմնադրման 85-ամյակը

Այս տարին հոբելյանական է Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համար: Անվանի կոլեկտիվը նշում է հիմնադրման 85-ամյակը:

Երգչախումբը հիմնադրվել է 1937 թ. Թաթուլ Ալթունյանի կողմից, ով ստանձնեց երգչախմբի զեղարվեստական ղեկավարի պաշտոնը մինչև 1939 թ.: Իսկ 1961-ի սեպտեմբերից մինչ օրս երգչախմբի զեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր է հանդիսանում իսրայելացի ժողովրդական արտիստ, իսրայելական իսրայելական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային հերոս, մանստրո Հովհաննես Չեքիջյանը:

Իր հարուստ պատմության ընթացքում երգչախումբն արժանացել է «Ակադեմիական» (1969 թ.), այնուհետև՝ «Վաստակավոր կոլեկտիվ» կոչումներին (1975 թ.): 2012-ին երգչախմբին շնորհվել է «Ազգային» կարգավիճակ:

Ստեղծագործական բեղուն երկարատև տարիների ընթացքում երգչախումբը հանդես է եկել Փարիզի, Լոնդոնի, Պրահայի, Նյու Յորքի, Բոստոնի, Դետրոյթի, Լոս Անջելեսի, Մոսկվայի և այլ աշխարհահռչակ համերգասրահներում:

Նշենք նաև, որ Կանադայում թողարկվել են երգչախմբի «LITURGIE ARMENIENNE», իսկ Մոսկվայում՝ «LITURGY of KOMITAS» ձայնակավառակները:

ԿԳՄՍ նախարարը Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հիմնադրման 85-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել, որում մաս-

նավորապես ասվում է. «Ձերմորեն ողջունում են արվեստասեր հասարակությանը Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի 85-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, որի անփոփոխ ղեկավարը 1961 թվականից իսրայելացի ժողովրդական արտիստ, իսրայելական իսրայելական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային հերոս, մանստրո Հովհաննես Չեքիջյանն է, բեղմնավոր գործունեություն է ծավալել մեր հայրենիքում և նրա սահմաններից դուրս՝ աշխարհի ավելի քան 27 լեզուներով երգելով հայ և համաշխարհային կոմպոզիտորների դասական ստեղծագործությունները:

Երգչախմբի՝ անընդհատ նոր հորիզոններ բացող, հայ երգարվեստի ժառանգությունը սերնդեսերունդ փոխանցող գործունեությունը վառ վկայություն է բարձր արժեքների հանդեպ երգչախմբի պատասխանատու վերաբերմունքի և յուրահատուկ առաքելության:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբին և անձամբ սիրելի մանստրոյին մաղթում են բազում հաջողություններ, ստեղծագործական ձեռքբերումներ ու նոր մերձեցանքներ»:

Հոբելյանի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ հունիսի 21-ին «Արան Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ հանդիսավոր համերգ: Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի ու Հայաս-



տանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ հնչեցին հայ և արևմտաեվրոպական հայտնի կոմպոզիտորների ստեղծագործություններից, այդ թվում՝ Կոմիտասի, Վերդիի, Մոցարտի, Մասկանյիի աշխարհահռչակ գործերից: Համերգը ղեկավարեցին դիրիժորներ Հովհաննես Չեքիջյանն ու Էդուարդ Թոփչյանը: Ռեժիսոր՝ Արթուր Սահակյան:

Անվանի երգչախմբի հոբելյանի առթիվ ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և նախարարի տեղակալ Արա Խզմայանը հունիսի 22-ին այցելեցին մանստրո Հովհաննես Չեքիջյանին:

<https://escs.am/am/news/13000>
<https://escs.am/am/news/12982>

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՍԵՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈՍԿ
ՍԵՐԳԵՅ ՍՈՐԱՅԱՆ, ԳՈՅՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԿԱՐԻՍ ԿՐԻՍՏՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՅՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿՐԻՍՏՅԱՆ (հայ, լեզու),
ՍՈՖՅԱ ԱԶՆԱՒԻՐՅԱՆ (ռուս, լեզու)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.06.2022:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է քաղաքային «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՋԼՍ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցներ կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեքսերում մեր վերահրապարակել միմյան հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունը նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
<http://www.conservatory.am>,
E-mail: yerazhisht@gmail.com
<https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

